ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԱՇԿԵՐՏԻ ՀՈՎՏՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1914-1916 թթ.)

ՍԱՀԱԿՅԱՆ Ռ. Օ.

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ հասարակության առջև դրված կարևորագույն հիմնահարցերից մեկը հայ գաղթականության օգնության կազմակերպումն էր: Ռուս-թուրքական (Կովկասյան) ռազմաճակատում մարտական գործողությունների սկսվելուց հետո Անդրկովկաս են գալիս առաջին փախստականները՝ հիմնականում սահմանամերձ շրջանների բնակիչներ, որոնք, մտահոգված իրենց և հարազատների անվտանգությամբ, շտապում էին հեռանալ բնակության վայրերից:

Հայերի, ինչպես նաև հույների ու ռուսների առավել մեծ զանգված գաղթում է 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Կարսի նահանգում և Բաթումի մարզում բռնկված՝ աջարների և թուրքերի խռովությունից հետո: Ռուսահպատակ քրիստոնյաների, հիմնականում հայերի դույքը թալանվում է, իսկ շատերը սպանվում են: Զրկված գոյության ամենատարրական միջոցներից՝ նրանք հայցում են ռուսական իշխանությունների և հայկական բարեգործական կազմակերպությունների օգնությունը:

Հայ փախստականներին առաջին զգալի օգնություն ցուցաբերում է Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը: Հայկական կազմակերպությունների առավել ծավալուն աշխատանքները սկսվում են այն բանից հետո, երբ ռուսական բանակը դրավում է Ալաշկերտի հովիտը: Հայկական բարեգործական և հասարակական կազմակերպությունները, որոնց թվում էր Թիֆլիսի Հայոց գյուղատընտեսական և տնայնագործական ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն), միջոցներ են ձեռնարկում բնակչության վերադարձն ապահովելու և գյուղատնտեսական աշխատանքները վերսկսելու համար:

Արդեն 1914 թ. նոյեմբերին Ընկերությունը սկսում է վերակառուցել իր աշխատանքները՝ նկատի ունենալով նաև Արևմտյան Հայաստանում, մասնավորապես Ալաշկերտի հովտում իր ծավալելիք գործունեությունը[1]: Կազմակերպությունն ուներ 150 անդամ և հրատարակում էր Անդրկովկասի գյուղատնտեսական առաջին պարբերականը՝ «Գյուղատնտեսը»[2]: Ինքնին հասկանալի է, որ ընկերությունը պետք է շարունակեր իր աշխատանքները նաև Արևելյան Հայաստանում և

---

[1] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 654, ց. 1, գ. 16, թ. 6:*
[2] *Նույն տեղում, գ. 9, թ. 13 շրջ.:*

Անդրկովկասի հայաբնակ գավառներում: Դա իր հերթին կապահովեր արևմտահայության գյուղատնտեսական օգնության կազմակերպումը երկրագործական գործիքներով, սերմացուով, լծկաններով և անհրաժեշտ այլ պարագաներով: Բացի այդ, Ընկերության վարչությանը հետաքրքրում էր Կովկասի փոխարքայության վարչական տարածքում բնակվող հայ գյուղացիության վիճակը: Նշենք, որ պատերազմի ընթացքում Ընկերությունը և նրա լիազորները համապատասխան ուսումնասիրություններ էին կատարում՝ գյուղացիական տնտեսությունների վիճակը և սպասվելիք բերքի մոտավոր քանակը պարզելու համար: Արդեն 1916 թ. վերջին Ընկերությունն ահազանգում է մոտալուտ սովի մասին, որը Երևանի նահանգում ցանքատարածությունների և ընտանի կենդանիների գլխաքանակի անկման հետևանք էր:

Ընկերությունն ուներ նյութական սահմանափակ հնարավորություններ: 1914 թ. այն ուներ 20700 ռուբլի եկամուտ, որի կեսը՝ 10900-ը, փոխանցում էր Պետերբուրգի Հայոց եկեղեցական խորհուրդը: Երեք հազար ռուբլի տալիս էր Երկրագործական դեպարտամենտը, չորս հազարն էլ անհատների նվիրաբերություններն էին: Մնացած գումարը գոյանում էր անդամավճարներից, «Գյուղատնտես» թերթի վաճառքից և այլ միջոցներից[3]: Փաստորեն, այլ կազմակերպություններից գումար չստանալու դեպքում Ընկերությունն ի զորու չէր լուրջ օգնություն ցուցաբերել արևմտահայ գյուղացիությանը: Ընդամենը կարող էր երկրագործական աշխատանքները կազմակերպող մասնագետներով ապահովել: Դրա համար անհրաժեշտ էին լրացուցիչ ծախսեր: Ինչպես վկայում են արխիվային վավերագրերը, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ընկերությունը դրամական միջոցներ է ստացել հիմնականում Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոյից, Կովկասի փոխարքայությունից, ինչպես նաև անհատ անձանց, օրինակ՝ Լևոն Մանթաշյանի նվիրատվություններից:

Պատերազմի սկզբում՝ 1914 թ. հոկտեմբերի 23-ին և դեկտեմբերի 21-ին Կովկասյան բանակի նահանջը Ալաշկերտի և Բասենի հայությանը հարկադրում է երկու անգամ գաղթել[4]: Բացի ճանապարհին կրած զրկանքներից, նրանք ենթարկվում են նաև քրդական հարձակումներին: Առևանդվում են կանայք ու երեխաներ[5]: Ռուսական զորամասերի հետ նրանց պաշտպանությունն իրականացնում էր հայկական II խումբը (դրուժինան)[6]: Ալ. Շիրվանզադեի վկայությամբ՝ «Սկսվեց մի դաղթականություն, որի նմանը Շահ-Աբասի օրերն էին միայն տեսել»[7]: Նա նաև հետևյալն է հաղորդում. «Կազակներն ահագին օգնություն էին ցույց տվել կանանց և մանավանդ երեխաներին, տալով նրանց իրենց ձիերը, տաք վերնազգեստները և շատերին կերակրելով: Մի շարք

[3] Նույն տեղում:
[4] Համրավարեր, Թիֆլիս, 19.VI.1916, էջ 775:
[5] ՀԱԱ, ֆ. 57, ց.17, գ. 301, թ. 3:
[6] Նույն տեղում, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 13:
[7] **Զաքարյան Ա.**, Շիրվանզադեի հրապարակախոսական ժառանգությունից (1914-1919թթ.), Ե., 2006, էջ 61:

կազակներ երեք, չորս օր պահել ու կերակրել էին երեխաներին մինչև նրանց ծնողների գտնվելը»[8]:

Ալաշկերտի 24 հազար և Բասենի 20 հազար բնակչությունն ազատվել էր կոտորածից[9]: Ամբողջովին կոտորվում են Զեդկանի, Մոլլա-Սուլեյմանի, Խաստուրի և այլ գյուղերի, ինչպես նաև Բասենի մի շարք բնակավայրերի բնակիչները[10]:

Ռուսական զորքերի կողմից Ալաշկերտի գրավվելուց հետո այնտեղ են գալիս մի խումբ երիտասարդ գործիչներ՝ Ս. Տիգրանյանի գլխավորությամբ: Նախնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ալաշկերտի 23 հայկական գյուղերի մեծ մասը կողոպտվել և քարուքանդ է արվել[11]: Ինչպես վկայում է Կ. Սասունին, Ս. Տիգրանյանի գլխավորած խումբը «ե՛ւ օգնության մարմին էր, ե՛ւ կառավարչական դեր կը խաղար (անշուշտ, քօղարկուած կերպով), ե՛ւ տեղաւորման ու հողային բաշխման գործերը կը կարգաւորէր»[12]:

1914 թ. նոյեմբերի 20-ին Ազգային բյուրոն[13] Բասեն է ուղարկում վեց հոգուց բաղկացած նոր խումբ, որը կոչվեց «Բասենի քաղա- քացիական մարմին»[14]: Նրա անդամներն էին՝ Կորյուն Ղազազյանը, Մինաս Մակարյանը, Տիգրան Ավետիսյանը, Ծատուրը (բժիշկ Բ. Բաղդասարյան), Վահան Խատուտյանը և Կ. Սասունին[15]: Ընկերության Ալաշկերտի լիազոր Արշակ Թադևոսյանը նշում է. «Ժողովրդի տնտեսական ապահովությունը, նրա վիճակի բարելավումը ինքն ըստ ինքյան մեծ գործ է, բայց նրանից ավելի դնահատելի է այն հեղաշրջումը, որ առաջ է բերված տաճկահայերի (արևմտահայերի – Ս. Ռ.) պես հետամնաց և տաճկական ռեժիմից այլանդակված մեր ժողովրդի մեջ, որի մեջ հաջողվել է մարմնացնել հասարակական սկզբունքները և կարգերը»[16]:

Բասենում առաջին հերթին ցուցակագրում են բնակչությանը, կազմակերպում գյուղական նոր վարչություններ: Հաշվառվում և ստուգվում է բասենցիների սակավաթիվ զենքը: «Զեռնարկվեցաւ պրոպականտի, գյուղական հետամնաց շրջանը քաղաքական եւ ազգային խնդիրներու շուրջ լուսաբանելու համար»[17]:

---

[8] Նույն տեղում, էջ 68:

[9] Սասունի Կ., Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918). Թրքահայոց գաղթաշարժերը և անոնց դերը Հայաստանի Հանրապետության կազմութեան մէջ, Պէյրութ, 1966, էջ 40:

[10] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 132, թ. 36:

[11] Նույն տեղում, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 25 շրջ.:

[12] Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 45:

[13] Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից-1917թ.), Ե., 2004, էջ 668: 1915 թ. մայիսի 17-ի Կ. Սասունու զեկուցագրից երևում է, որ նրանց խմբին ուղարկել է Կովկասի հայոց բարեգործական ընկերության (ԿՀԲԸ) Հայկական կենտրոնական կոմիտեն (տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 20): Գործելով Հայկական կենտրոնական կոմիտեի անվան ներքո՝ նրանք թաքցնում էին նաև իրենց գլխավոր խնդիրներից մեկը՝ հայացնել Ալաշկերտի շրջանը՝ օգտվելով այն հանգամանքից, որ քրդերն ու թուրքերը հեռացել են իրենց բնակավայրերից:

[14] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 20:

[15] Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 45-46:

[16] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 77 շրջ.:

[17] Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 48:

1915 թ. հունվարին Գյուղատնտեսականի լիազոր Սահակ Մատինյանը կատարում է Ալաշկերտի, Ղարաքիլիսայի և Դիադինի շրջանների հայկական բնակավայրերի մոտավոր վիճակագրություն. այն է՝

Ալաշկերտի շրջան

	Բնակավայրի անվանումը	Տների քանակը
1	Զեռկան	100
2	Խոշիան	15
3	Մոլլա-Սուլեյման	170
4	Խաստուբ	250
5	Զլկանի	100
6	Խաղլո	60
7	Թուլրակ-Կալե	600
8	Ղայարեկ	70
9	Իրիցու գյուղ	70
10	Եղնիթափա	150
11	Համադ	200
12	Ղարաքիլիսա	35
	Ընդամենը՝	*1840*

Ղարաքիլիսայի շրջան

	Բնակավայրի անվանումը	Տների քանակը
1	Երանոս	20
2	Ղարաքիլիսա	400
3	Իրիցու գյուղ	150
4	Եոնղալի	170
5	Ղաղի գյուղ	80
6	Զիրո	12
7	Մանզասար	150
8	Խրդրը	10
9	Զամբլի	8
10	Ղարասու	20
11	Մաղրա*	150
12	մեկ գյուղ չեմ դրել	
	Ընդամենը՝	*1170*

Դիադինի շրջան

	Բնակավայրի անվանումը	Տների քանակը
1	Ղարաբազար	35
2	Սեյդու	4
3	Շուշան	50
4	Ղուժլի-Բուլջաս	40
	Ընդամենը՝	*194*[18]

* *Մեկ գյուղ նշված չէ:*

[18] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 17, գ. 301, թ. 3-4:*

Ս. Մատինյանը կատարում է մոտավոր հաշվարկ՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր տանը բնակվել է, միջին հաշվով, տասը հոգի: Դրանից հետևում է, որ Ալաշկերտի շրջանի հայ բնակչության թիվը եղել է 18400, Ղարաքիլիսայինը՝ 11700, Դիադինինը՝ 1940, իսկ ողջ հայությանը՝ 30 հազար հոգի[19]:

Առաջնահերթ խնդիրներից էր գաղթականների բնակեցումը քըրդական և թուրքական լքյալ գյուղերում: Դա բացառիկ հնարավորություն էր տալիս թուրք-քրդական բնակավայրերում տեղավորելու հայերին: Կ. Սասունու համոզմամբ՝ «Տեղավորումը կը նշանակեր հայացնել շրջանը»[20]: Նման խնդիր էր հետապնդում նաև Ընկերությանը կից հիմնված «Հայ գյուղացիության տնտեսությունը վերականգնող կոմիտեն»[21]: Սակայն նախատեսված ծրագրերը չի հաջողվում իրականացնել: Ռուսական զորքը, չկարողանալով դիմագրավել թուրքական լայնածավալ հարձակմանը, ստիպված է լինում նահանջել: Ալաշկերտի և Բասենի բնակչությունը ևս հարկադրված էր անցնել Կովկաս[22]:

Սարիղամիշի ճակատամարտում (1914 թ. դեկտեմբեր-1915 թ. հունվար) թուրքական 3-րդ բանակի պարտությունը Բասենի և Ալաշկերտի բնակչությանը հնարավորություն է տալիս վերադառնալ հայրենի օջախները: ԿՀԲՀ-ն քայլեր է ձեռնարկում Ալաշկերտ վերադարձող գաղթականների անվտանգությունն ապահովելու համար: Ենթադրվում էր կազմել պահակախումբ, որը բաղկացած էր լինելու հարյուր հոգուց: Կազմվում է նաև նրանց պահելու նախահաշիվը:

Ղարաքիլիսա է գալիս Քաղաքների միության խումբը՝ Ռոստոմի գլխավորությամբ[23]:

1915 թ. մարտին Ընկերությունը Ալաշկերտում հիմնում է իր մասնաճյուղը, որը պետք է գյուղացիներին օժանդակեր կազմակերպելու երկրագործական աշխատանքները[24]: Սկսած 1915 թ. մարտի 20-ից՝ վերադարձողներին բաժանվում է 14 հազար փութ ցորեն: Նրանք էլ իրենց հերթին հայթայթում են որոշ քանակությամբ ցորեն: Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ առկա ցորենը գյուղացիներին կբավարարի մինչև մայիսի 25-30-ը: Սակայն ոչ բոլորն էին կարողացել լրացուցիչ ցորեն հայթայթել: Մի քանի մարդ սովամահ են լինում[25]:

Ապրիլի 2-ի հեռագրում Ա. Թադևոսյանը Ընկերության նախագահ Ա. Սահակյանին հայտնում է, որ չորս գյուղերի բաժանվել է հարյուր գլուխ ընտանի կենդանի: Սակայն դա բավարար չէր. անհրաժեշտ էր առնվազն 600 գլուխ լծկան: Գյուղատնտեսական աշխատանքները հնարավոր չի լինում սկսել անձրևների պատճառով: Փախստականների վիճակը ծանր էր: Սննդամթերքի սակավության պատճառով գլուխ էին բարձրացրել

[19] Նույն տեղում, ց. 2, գ. 1313, թ. 6 շրջ.-7:
[20] Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 49:
[21] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 33:
[22] Նույն տեղում, թ. 21:
[23] Տե՛ս Գաղափար, 24.II.1916:
[24] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 42:
[25] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 24:

տարբեր հիվանդություններ: Անհրաժեշտ էր շտապ ուղարկել բուժ-օգնություն[26]:

Մայիսի 24-ին Մանազկերտ են ժամանում Ընկերության ներ-կայացուցիչները: Նրանց մեջ էր հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի որդին՝ Մուշեղը: Մայիսի 26-ին Ընկերության Ալաշկերտի լիազոր Արշակ Թադևոսյանին ուղղված նամակում Մուշեղ Թումանյանը հայտնում է. «Տիֆ հիվանդությունը սարսափելի չափերի է հասել՝ չենք կարող մի հիվանդանոց հիմնել, վասն զի անհնար է 100-200 հիվանդների համար տեղ գտնել և, որ ամենագլխավորն է՝ խնամել»[27]: Այդ նպա-տակով անհրաժեշտ էր սանիտարական ջոկատ ուղարկել Ալաշկերտ-Ղարաքիլիսա:

Մ. Թումանյանը վկայում է, որ իրենց գգալի օգնություն են ցույց տալիս շրջանում տեղակայված դիվիզիայի հրամանատար, գեներալ Ն. Վորոպանովը, Մանազկերտի զինվորական պարետ, ենթասպա Ուշկովը: Մ. Թումանյանը վերջինիս բնութագրում է որպես «մի աննման մարդ»: Նա հետևյալն է գրում. «սրանք են (վերոնշյալ ռուս սպաները – Ս. Ռ.) ստեղծում էդ լավը՝ կազմակերպել են տեղական ոստիկանություն, աշխատում են գյուղացիներին դյուրություն տալ: Վորոպանովը երբ իմացել էր, որ բժիշկն ու ես եկել ենք, ակնարկել էր, որ լավ կը լիներ, որ մենք այցելեինք իրան»: Գեներալը պատրաստակամություն է հայտնում աջակցել գաղթականությանը վերաբերող ցանկացած հարցին[28]:

Աշխատանքներ են տարվում լքված գյուղերի հորերում թաքցրված ցորենը գտնելու համար[29]: Գտնված ցորենի կեսը տրվում էր բնա-կիչներին, իսկ մնացածը կենտրոնացվում էր պահեստներում՝ բնակչու-թյանը բաժանելու համար: Ազգային մարմինը միաժամանակ գնում էր ցորենը փութը մեկ ռուբլով: Նշված աշխատանքների շնորհիվ 1915 թ. ապրիլին կուտակվում է մոտ 60 հազար կոտ ցորեն և գարի[30]: Գյուղացիներից հավաքած ցորենը կուտակվում էր հատուկ պահեստներում, որոնք կոչվում էին Ազգային ամբարներ[31]:

Մ. Թումանյանի հաղորդման համաձայն, կազմվում են երեք հանձնա-ժողովներ՝ աշխատանքային խմբեր: Առաջինը պետք է կապ պահպանվեր տեղական իշխանությունների հետ, երկրորդը՝ բժիշկների: Նա պետք է բուժօգնություն ցույց տար հիվանդներին, հետևվեր փողոցների և տների սանիտարահիգիենիկ մաքրությանը: Երրորդ խումբը, որը գլխավորելու էր Մ. Թումանյանը, զբաղվելու էր «զուտ փախստականական գործով, տնտեսական, բնակարանային, հագուստի և այլն, մի խոսքով այն

---

[26] Նույն տեղում, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 152:

[27] Նույն տեղում, թ. 14: Մ. Թումանյանն ինքն էլ է հիվանդանում և ոտիպված է լինում ժամանակավորապես դադարեցնել իր գործունեությունը: Ապաքինվելուց հետո նա պատրաստակամություն է հայտնում վերադառնալ Ալաշկերտ և շարունակել աշխատանքները (տե՛ս նույն տեղում, թ. 29, 33): Մ. Թումանյանի հաշվետվությունը տե՛ս **Սահակյան Ռ. Օ.**, Մուշեղ Թումանյանի 1915 թ. մայիսի 26-ի նամակ-զեկուցագիրը Ալաշկերտի հայության վիճակի մասին (ՎԷմ, 2009, N 3, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 186-190):

[28] ՀԱԱ. ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 15 շրջ.:

[29] Նույն տեղում, թ. 16 շրջ.:

[30] **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 65-66:

[31] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 23:

բոլորով ինչ որ չի մտնում վերը յիշած երկու յանձնաժողովների գործունեութեան սահմանը»: Նրա խմբի անդամներն էին Համազասպ վարդապետը, տեր-Հովհաննես քահանան, Առաքելը, Մխիթարը՝ թվով 10-15 «ինտելիգենտ անձնավորություններ»[32]:

1915 թ. հունիսի 1-ից սկսում է գործել երեք հոգուց կազմված՝ «Բասենի քաղաքացիական խումբը», որի անդամներն էին Արտաշես Ասլանյանը, Սամսոն Հովհաննիսյանը և Միքայել Նանիկյանը[33]: Նրանք առաջին հերթին հաշվառում են Բասենում բնակվող գաղթականներին, որոնք մոտավոր հաշվումներով 844 ընտանիք էին կամ 6235 հոգի[34]: Խմբի կարծիքով, «...այդ թիվն անշուշտ ավելի բարձրանալու է և թերևս արդեն իսկ բարձրացած էլ լինի, որովհետև Կովկասից, մանավանդ Ղարսի շրջանից, շատերն են գալիս մեր կողմերը, որտեղ նրանց համար համեմատաբար դյուրին է ապրել»[35]:

1915 թ. հունիսի 4-ին «Հայ գյուղացիության տնտեսությունը վերականգնող կոմիտեի» լիազոր Արշակ Թադևոսյանը Ընկերության նախագահ Ա. Սահակյանին հայտնում է, որ ռազմաճակատի մոտիկությունը շատերի մեջ այն կարծիքն է ձևավորել, որ փախստականների վերադարձը «այս տարվա ընթացքում անհնարին է, վտանգավոր է և հետևապես՝ ոչ ցանկալի»[36]:

Ալաշկերտի շրջանում հնարավոր է լինում ցանել մոտ 2700 սոմար (մեկ սոմարը մոտավորապես 7,5 փութ է), իսկ Ղարաքիլիսայի շրջանում՝ 1300 սոմար ցորեն: Բացի այդ, բնակչությունը կարողացել էր հայտնաբերել քրդերի թաքցրած ցորենը, օգտագործել սեփական կարիքների համար և նույնիսկ մի մասը վաճառել շրջանում տեղակայված ռուսական զորամասերին: Ենթադրվում էր, որ ցորենի բերքը կստացվեր մեկը ութի հարաբերությամբ: Ըստ Ա. Թադևոսյանի, դա հնարավորություն կտար բնակչությանը մեկ տարի ապահովել հացով[37]:

Հուլիսին Ընկերության ուղարկած 400 դերանդին նույնպես բաժանում են բնակչությանը: Համատեղ ուժերով կատարվում է խոտհարքը: Հնձած խոտը տրվում է գյուղացիներին՝ հաշվի առնելով տնային կենդանիների թվաքանակը՝ կենդանիներին ապահովելով ձմեռային կերով[38]:

Օգոստոսի կեսերից ռուսական հրամանատարությունը նախաձեռնում է Մժնկերտ-Ղարաքիլիսա-Ալիջադրակ խճուղային ճանապարհի շինարարությունը և բանակի համար կացարանների կառուցումը: Տեղի բնակչությունը մասնակցում է շինարարական աշխատանքներին և լրացուցիչ դումար վաստակում[39]:

---

[32] Նույն տեղում, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 14 շրջ.:

[33] Գյուղատնտես, Թիֆլիս, N 2, 1.II.1916, էջ 26: Կազմակերպությունը կոչվել է նաև «Բասենի քաղաքացիական մարմին» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 14, թ. 5):

[34] Գյուղատնտես, N 2, 1.II.1916, էջ 28:

[35] Նույն տեղում:

[36] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 75:

[37] Նույն տեղում, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 7 շրջ.-8:

[38] Գյուղատնտես, N 2, 1.II.1916, էջ 28: Ալաշկերտի բնակչությանը տրվել էին 436 դութան, 140 դերանդի, 215 եղան, 115 բահ, 44 կացին և այլն (տե՛ս ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 43 և շրջ.):

[39] Գյուղատնտես, N 2, 1.II.1916, էջ 28:

Արշակ Թադևոսյանի կազմած նախահաշվի համաձայն, Ալաշկերտի հովտում գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ էր 121 հազար ռուբլի: Նա գնել ու գյուղացիներին է բաժանել 170 լծկան և մոտ հազար ռուբլու սերմացու[40]:

Մ. Թումանյանի վկայությամբ, տեղական իշխանությունների հետ հաստատվում են բարեկամական-չեզոք հարաբերություններ: Նրանք չէին խառնվում հայկական խմբերի գործողություններին. «մինչև հիմա մեզանից ոչ ոք ոչ մի թուղթ չի պահանջե, կարծես թե մարդիկ արդեն հաշտվել են այն մտքի հետ, որ ոչ մի կերպ մեզանից չեն ազատվելու և սուսուփուս մի modus vivendi (ժամանակավոր համաձայնություն - Ս. Ռ.) է ստեղծվում, ըստ երևույթին՝ մեզ համար բավական տանելի»[41]: Ընդհանրապես հայ գաղթականության համար կարևոր նշանակություն է ունենում 1915 թ. օգոստոսի 30-ին ռուսական կառավարության ընդունած որոշումը, որով հայ փախստականները կարող էին օգտվել պետական նպաստներից: Անաշխատունակներին տրվում էին օրական 15 կոպեկ նպաստ և պարեն[42]:

Դեկտեմբերի 23-ին Մակուի խանություն է գործուղվում Ալաշկերտում Ընկերության լիազոր Բաղդասար Աբոյանը: Նրան հանձնարարված էր Մակուի խանությունում գնել և Ալաշկերտ տեղափոխել մինչև 50 հազար փութ. ցորեն: Ներկրելու վերաբերյալ ստացվում է Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար գեներալ Պ. Օգանովսկու թույլտվությունը: Վերոհիշյալ ցորենից նախատեսվում է 25-30 հազարը բաժանել գյուղացիներին, իսկ մնացած 20 հազարը պահել որպես սերմացու: Նույն ժամանակաշրջանում հայտնի է դառնում, որ մեծահարուստ և բարերար Ալեքսանդր Մանթաշյանի որդին՝ Լևոնը, 600 հազար ռուբլի է նվիրաբերում «հայ ժողովրդի գյուղատնտեսական-կրթական կարիքների համար»: Նա միաժամանակ նախատեսել է զարգացնել գտարյուն ձիերի բուծումը: Նշված աշխատանքը հանձնարարվել է Ընկերությանը[43]:

Ռուսական իշխանություններից հաջողվում է ստանալ տաք հագուստ և այլուր: Ընկերությունն ինքը պետք է հոգար բեռների տեղափոխումը Էջմիածնից Ղարաքիլիսա: Այդ մասին հայտնելով Ընկերության նախագահ Ա. Սահակյանին՝ նույն Ընկերության աշխատակից Բ. Աբոյանը խորհուրդ է տալիս ձիերի և սայլերի համար դիմել Երևանում գտնվող Դրոյին[44]:

Փետրվարի 20-ին Բասենի քաղաքացիական կոմիտեի անդամ Միքայել Նանիկյանը Ա. Սահակյանին ուղղած նամակում հայտնում է, որ կոմիտեն երկու ամիս չարունակ զբաղված է եղել Բասենի բնակչության և գույքի վիճակագրությամբ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թուրքական Բասենի 19 գյուղում բնակվում էին մոտ վեց հազար հոգի: Գյուղերն ունեին 6920 դեսյատին հերկած և 1740 դեսյատին չհերկած հող: Գարնանացանի համար անհրաժեշտ էր 1100 արոր, իսկ

---

[40] ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 7 շրջ.:
[41] Նույն տեղում, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 15 շրջ.-16:
[42] Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 132, թ. 39:
[43] Գյուղատնտես, 15.I.1916, էջ 13:
[44] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 182:

գյուղացիներն ունեին 300-ը: Եղների գլխաքանակը հնարավոր չի լինում ճշտել, քանի որ դրանց մի մասը սատկել էր, իսկ մի մասն էլ գյուղացիները վաճառել էին, որովհետև գտնվում էին ծանր վիճակում: Մինչդեռ վերոնշյալ հողատարածությունները ցանելու կամ վարելու համար հարկավոր էր 1500 լծկան[45]:

Փետրվարի 28-ին Մ. Նանիկյանը Ա. Սահակյանին գրած նամակում տագնապով հայտնում է, որ եղանակներն անսովոր տաք են, և դարնանացանն ավելի շուտ է սկսվելու: Այդ իսկ պատճառով, «գյուղացիք արդեն սկսել են անհանգստանալ դարնանացանի համար, և ամեն օր դիմում են մեզ հարցնելով՝ արդյոք պիտի ստանա՞ն սերմացու և ե՞րբ»[46]:

Ղարաքիլիսա-Ալաշկերտ շրջանի բնակչությանն օգնելու և տեղում նրա նվազագույն կարիքները բավարարելու համար կարևոր էր Ընկերության Ալաշկերտի լիազոր Ն. Օթարյանին Էջմիածնի «Եղբայրական օգնությունից» տրված 20 հազար ռուբլին: Գումարը նախատեսված էր Ալաշկերտի, Բայազետի և Դիադինի գյուղական բնակչությանը երկրագործական գործիքներով ապահովելու համար: Իսկ Դիադինի շրջանի կառավարիչ բարոն Խովենը ռուսական իշխանությունների անունից հանձնում է 11500 ռուբլի՝ Դիադինի շրջանի գյուղացիների համար սերմացու գնելու[47]:

1916 թ. ապրիլին Ղարաքիլիսայում բացվում է հիվանդանոց, որի ֆինանսավորումն իրականացնում է Ամերիկահայ բժշկական հանձնաժողովը: Վերջինս Ղարաքիլիսա է դործուղում բժիշկ Քրեսիին: Նա պետք է Ալաշկերտում հիմներ հիվանդանոց: Նյու Յորքից ժամանում է բժիշկ Վիլյամ Հարդվելը, որն իր հետ բերել էր հինդ արկղ դեղորայք՝ Ղարաքիլիսայում հիմնվելիք հիվանդանոցի համար[48]:

Իր հերթին, «Հայ գյուղացիության տնտեսությունը վերականգնող կոմիտեն», որի հիմնական պարտականությունն էր տեղում գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպումը, նկատի ունենալով, որ բնակչության շրջանում տարածված հիվանդությունների հետևանքով կարող են ձախողվել հողագործական աշխատանքները, քայլեր է ձեռնարկում 20 մահճակալանոց հիվանդանոց բացելու համար: Ինչպես նշում է ընկերության լիազոր Ա. Թադևոսյանը. «Եթե վաղօրոք միջոցներ ձեռք չառնվեին, կանանց և երեխաների վերադարձով ճարակը կարող էր ընդունել ահռելի չափեր»[49]:

Բացի Ընկերության «Հայ գյուղացիության տնտեսությունը վերականգնող կոմիտեից», Ալաշկերտ-Ղարաքիլիսայի շրջանում գործում էին «Հայկական կենտրոնական կոմիտեն», Էջմիածնի «Եղբայրական օգնության հանձնաժողովը», որոնք բավական աշխատանքներ են կատարում փախստականների վերաբնակեցումը կազմակերպելու համար: Ընկերության կարծիքով, նրանք իրենց հիմնական ջանքերը պետք է կենտրոնացնեին բնակիչներին կացարաններով ապահովելու

[45] Նույն տեղում, գ. 14, թ. 1 և շրջ.:
[46] Նույն տեղում, թ. 3 շրջ.:
[47] Գյուղատնտես, N 3, 15.II.1916, էջ 47:
[48] Համրավարեր, N 17, 24.IV.1916, էջ 531:
[49] Գյուղատնտես, N 1, 15.I.1916, էջ 5:

ուղղությամբ[50]: Ռուս-թուրքական ռազմաճակատի որոշ կայունացումը փախստականներին հնարավորություն է տալիս վերադառնալ և վերականգնել ավերված տները և ձեռնարկել գյուղատնտեսական աշխատանքների: Ալաշկերտ են գալիս հիմնականում տղամարդիկ, որոնց թիվը հասնում էր վեց հազարի[51]: Կանայք ու երեխաները մնում են Կովկասում: Պիտի վերադառնային այն ժամանակ, երբ հնարավոր կլիներ նրանց ապահովել պարենով և տնով: Վերադարձողները բնակվում են 25 գյուղերում, որոնց մեծ մասը ավերակ վիճակում էր: Այնուամենայնիվ, գյուղացիները ձեռնամուխ են լինում երկրագործական աշխատանքներին: Նրանք ցանում են մոտ 400 հազար փութ հացահատիկ:

Աշխատանքները կատարվում էին խիստ աննպաստ պայմաններում: Լծկանների զգալի մասը հյուծված էր, պակասում էր կերը, բնակչության շրջանում տարածված էին տարափոխիկ հիվանդություններ, դլխավորապես տիֆ, չկային կեցության համար նվազագույն պայմաններ[52]:

Ընկերության Ալաշկերտի լիազորի պաշտոնակատար Հ. Զոլախյանը հայտնում է, որ 1916 թ. օգոստոսի 23-24-ը Մուշից և Խնուսից եկել են 315 հոգի: Մոտ 300 հոգի էլ Ալաշկերտի գյուղերից վերադարձել են Մանազկերտ, Դատվան և «մասամբ էլ ավելի առաջ՝ դեպի Բիթլիս»[53]:

Աշնանը, սակայն, Բասենի շրջանում ստեղծվում է ծայրահեղ ծանր վիճակ: Բնակչությանը սպառնում էր սովը: Այդ մասին ահազանգում է Քաղաքների միության Էրզրումի փախստականների սննդակայանի գլխավոր կառավարիչ Ս. Օհանջանյանը: Ս. Հարությունյանին ուղղած նամակում նա հայտնում է. «Յորեն կամ այիր բոլորովին չկա (ընդգծումը՝ փաստաթղթից - Ս. Ռ.): ...Շրջանիս գաղթականության կարող անհատը, դրամը ձեռքին, անկարող է լինում մի բուռն անգամ ալյուր ձեռք բերելու: Էլ չենք խոսում անկարող և նյութական միջոցներից զուրկ որբերի և այրիների մասին»[54]:

Գաղթականների կատարած հաշվարկի համաձայն, յուրաքանչյուրին օրական անհրաժեշտ էր երկու ֆունտ ալյուր, որը 12 հա- զար գաղթականի համար կկազմեր օրական 600, իսկ ամսական՝ 1800 փութ ալյուր: ԿՀԲԸ-ի՝ Բաշդյուղում գտնվող սննդամթերքի պահեստից կարողանում էին օգտվել նրանք, ովքեր դրամ ունեին և գյուղին մոտ էին ապրում: Առավել դժվար էր այն գյուղացիների վիճակը, որոնք բնակվում էին պահեստից մոտ հարյուր վերստ հեռավորության վրա: Նրանց մի մասը զուրկ էր դրամական որևէ միջոցից և այդ իսկ պատճառով չէր կարող օգտվել Բարեգործականի պահեստից[55]:

Ընկերությունը դիմում է Ս. Էջմիածնի «Եղբայրական օգնության հանձնաժողովին»՝ խնդրելով օժանդակել Ալաշկերտի Խաստուր և Թոփ-

---

[50] Նույն տեղում, էջ 4:

[51] Ըստ «Հայ գյուղացիության տնտեսությունը վերականգնող կոմիտեի» Իգդիրի աշխատակցի վիճակագրության, 1915 թ. մայիսի դրությամբ Ալաշկերտ-Դարաքիլիսայի շրջան են վերադարձել 1800 հոգի, որոնք «ներկայացուցիչ են մոտ 1200 և 1500 ընտանիքների» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 33):

[52] Նույն տեղում:

[53] Նույն տեղում, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 49:

[54] Նույն տեղում, ց. 1, գ. 582, թ. 1:

[55] Նույն տեղում, թ. 5:

բակ-Կալե գյուղերում բացվող դպրոցներին, սակայն հանձնաժողովի ուսումնական խորհուրդը մերժում է՝ պատճառաբանելով, որ նշված վայրերը չեն մտնում իր գործունեության շրջանակի մեջ[56]:

1916 թ. վերջից Բասեն են գալիս Արևելյան Հայաստանի տարբեր բնակավայրերում ապաստանածներ, թվով՝ 5 հազար հոգի: Վերադառնում են նաև տարբեր ժամանակներում թուրքական իշխանությունների վարած քաղաքականության հետևանքով իրենց օջախները լքած բասենցիները: Վերադարձողները բնակություն են հաստատում ինչպես իրենց, այնպես էլ լքյալ բնակավայրերում: Ա. Հարությունյանի հաշվարկի համաձայն, Բասենի շրջանում կային 2 հազար տուն դաղթական, թվով՝ 11290 հոգի[57]: Աստիճանաբար ավելանում են բնակիչները: 1917 թ. հուլիսին նրանց թիվը 15 հազար էր[58]:

Իրավիճակը փոքր-ինչ կարգավորվելուց հետո, Ընկերությունը նախատեսում է Ալաշկերտում հիմնել գյուղատնտեսական վարժարան, որն ունենալու էր երկու դասարան: Վարժարանը հիմնելու համար անհրաժեշտ էր 14750 ռուբլի[59]: Սակայն հետագա իրադարձությունները հնարավորություն չեն տալիս ավարտել Ալաշկերտի և շրջանի հայության վերադարձի ու վերաշինության հետ կապված աշխատանքները:

ДЕЯТЕЛЬНОСТЬ ТИФЛИССКОГО АРМЯНСКОГО СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОГО И КУСТАРНОГО ОБЩЕСТВА В АЛАШКЕРТСКОЙ ДОЛИНЕ В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

(1914-1916 гг.)

СААКЯН Р. О.

Резюме

Тифлисское Армянское сельскохозяйственное и кустарное общество было основано в 1909 г. и имело целью помочь армянским крестьянам в организации ремесел и сельскохозяйственных работ. Начиная с 25 января 1909 г. общество стало издавать специализированное издание "Гюхатнтес" ("Агроном"). Общество развернуло деятельность во время Первой мировой войны в Западной Армении, на освобожденной от турецких войск территории — в Алашкертской долине (1915-1916 гг). Уполномоченные и члены общества работали в исключительно тяжелых условиях.

[56] Նույն տեղում, գ. 304, թ. 7:

[57] **Հարությունյան Ա. Հ.**, Հայ գաղթականության տեղաբաշխումը և օգնության կազմակերպումը Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններում Մեծ եղեռնի տարիներին, Էջմիածին, N Դ, 2007, էջ 67:

[58] Նույն տեղում, էջ 68:

[59] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 16, թ. 104:

Это был период отступления русских войск, что пагубно отразилось на деятельности не только сельскохозяйственного общества, но и армян, которые вынуждены были покинуть свои жилища и отступить с русскими войсками. Несмотря на все сложности и значительные финансовые потери, общество продолжало помогать крестьянам, которые возвращались в свои деревни. После того как русские войска 3 февраля 1916 г. заняли крепость Эрзерум, в Алашкертскую долину стало возвращаться больше армян. Сын армянского нефтепромышленника и благотворителя Александра Манташяна — Левон пожертвовал крупную сумму — 600 тыс. рублей на открытие в Алашкертской долине сельскохозяйственной школы и конного завода. Однако последующие события помешали претворению в жизнь всех намеченных работ.